

III

ՍՏԵՓԱՆ ԴԵՄՈՒԻՐԵԱՆ

Յունտար 13ին, Երեւանում, 62 տարեկան հասակում, վախճանմաց կովկասահայ համեստ, բայց արժէքաւոր երաժշտագէտներից մէկը՝ Ստ. Դէմուրեանը: Նա ծննդել էր Թիֆլիսում, 1872 թ., մի չքաւոր ընտանիքում: 1883 թ. յաջողում է մանել Ներսիսեան Դըպրոց իրրեւ գիշերօթիկ եւ 1892 թ. աւարտում է լրիւ դասընթացքը: Աւ նոյն տարւանից էլ նւիրում է դպրոցական-երաժշտական գործունէութեան: 1892-94 թ. պաշտօնավարում է Շուշու թեմական եւ Մարիամեան դպրոցներում: 1895-98 թ. ուսուցչութիւն է անում Գորիսի ծխական ուսումնարանում: Այստեղ կազմում է եւ երգեցիկ խումբ, որի գլուխն անցած՝ համերգներ է տալիս Սուրամում, Ախալքալաքում եւ շրջակայ ուրիշ վայրերում: Նա հետեւում է ԿարաՄուրզայի օրինակին՝ տարածելով ժողովրդական եւ ազգային բաղմաձայն երգը հասարակութեան մէջ:

1898 թ. Դէմուրեանին յաջողուում է մանել Պետերբուրգի Երաժշտանոցը, բայց նիւթական պայմանները նրան հնարաւորութիւն չեն տալիս Երկար շարունակել երաժշտական ուսումը: Նա վերադառնում է Կովկաս եւ նորից նւիրում մանկավարժութեան, քառաձայն խմբեր է կազմում, ժողովրդական եւ ազգային երգեր է հաւաքում ու ճայնագրում. Հրապարակային համերգներ է կազմակերպում: Իրրեւ ուսուցիչ պաշտօնավարում է գաւառական մի շարք դպրոցներում: Իր կազմած քառաձայն խմբով շրջում է հայաբնակ վայրերը եւ համերգներ տալիս՝ Թիֆլիս, Բագու, Երեւան, Շուշի, Գորիս, Դիլիջան, Ալեքսանդրապոլ, Վլադիկավագ, Հանքային Զրեր եւայլն:

Հայաստանի անկախութեան շրջանին Դէմուրեանը գտնուում էր Հիւսիսային Կովկասում, իրրեւ ուսուցիչ եւ համերգներ կազմակերպող: Հայաստան եկաւ միայն 1926 թ. եւ մինչեւ մահ մնաց Երեւանում, իրրեւ ուսուցիչ, խմբավար, համերգներ կազմակերպող ու երգահան: 1930 թ. տօնւեց նրա մանկավարժական-երաժշտական գործունէութեան 40ամեայ յորելեանը:

Դէմուրեանը, իրրեւ երաժիշտ, պատկանում էր հին, նախախորհը պարզային սերունդին, ինչպէս եւ նրանից առաջ վախճանած երաժշտագէտ Սպ. Մելիքեանը: Նա իր ուսուցչական գործունէու-

թեամբ մեծ չափով նպաստեց երաժշտասէր ու երաժշտագէտ հասարակութեան պատրաստւելուն։ Նրա ջանքերով շատ դպրոցներում երգեցողութիւնն ու ձայնագրութիւնը դարձաւ դասաւանդման պարագաղիր առարկայ։

Իբրեւ բազմաձայն երաժշտութեան սիրահար, իր քառաձայն խմբերով եւ բազմաթիւ համերգներով Դէմուրեանը ահագին զարկ տւեց հայ երգի ժողովրդականացման։ Նա մտնում էր ամենախուռ դաւառները, երգը առնելով ժողովրդից՝ վերամշակւած ու կատարելագործւած՝ վերագրարձնում էր նոյն ժողովրդին։ Այս տեսակէտից նա յաջող շարունակողն էր Կարա-Մուրզայի գործի, որի երաժշշտական գերը շատ մեծ է արեւելահայոց մէջ։

Վերջապէս, Դէմուրեանը ունի եւ երաժշտական ստեղծագործութիւններ, տեսական ուսումնասիրութիւններ, որոնց մեծ մասը մնացել է անտիպ, եւ հաւաքել ու ձայնագրել է ժողովրդական երգեր։ Այս վերջինների մի մասը – 94 երգ – հրատարակւեց 1907 թ. Պետքրուրդում – «Քնար», ձայնագրեալ երգարան եւրոպական ձայնանիշներով։

Ստ. Դէմուրեանը իր տաղանդով, ի հարկէ, ոչ Կարա-Մուրզա էր, ոչ էլ Կոմիտաս, բայց իր մոլեոանդ սիրով դէպի հայ երգը, իր անդուլ աշխատանքով, իր բազմամեայ հետեւողական գործունէութեամբ մեծ ծառայութիւն է մատուցել հայ երաժշտական մշակոյթին։

IV

ՈՆՈՓՐԻՈՍ ԱՆՈՓԵԱՆ

Հիւծախտի ճիրաններում, երկարատեւ եւ տանջալից հիւանդութիւնից յետոյ, Խրիմի Սիմֆերոպոլ քաղաքում, վախճանւել է բանաստեղծ Անոփրիոս Անոփեանը։ Հանգուցեալլ ծնւել էր 1873 թ. Նոր-Նախիջևանում։ 1892 թ. աւարտել էր Նոր-Նախիջևանի թեմական դպրոցը եւ այնուհետեւ զբաղւում էր հաշւապահութեամբ բանկային հիմնարկութիւնների մէջ։

Անոփեանը պատանի հասակից սկսել էր գրել բանաստեղծութիւններ։ Նրա առաջին ոտանաւորը «Զմեռ» անունով տպւել է 1891